Հանդիպմանը Նորին Սրբությունն անդրադարձավ Եգիպտոսի և Հայաստանի միջև առկա սերտ կապերին: Այս առիթով Վեհափառ Հայրապետն իր շնորհակալությունն ու գնահատանքը հայտնեց դեսպանին՝ եգիպտահայ համայնքի նկատմամբ իշխանությունների բարյացակամ վերաբերմունքի համար: Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաև վերհիշեց 2000 թ. Եգիպտոս կատարած իր Հովվապետական այցը:

Զրույցի ընթացքում անդրադարձ եղավ միջեկեղեցական և միջկրոնական երկխոսության մեջ Հայ Եկեղեցու դերակատարությանը:

Վերջում Նորին Սրբությունն իր բարեմաղթանքներն ուղղեց դեսպանին՝ հաջողություն մաղթելով նրան դիվանագիտական իր առաքելության մեջ:

ԻՐԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ՀՐԱԺԵՇՏ ՏՎԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Դեկտեմբերի 19-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական իր առաքելությունն ավարտած Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ալիռեզա Հաղիղյանին:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը գոհունակությամբ նկատեց, որ երկու երկրների միջև փոխհարաբերությունները բոլոր ոլորտներում զարգացում են ապրում՝ դրանում կարևորելով նաև դեսպանատան դերը: Այս առիթով Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց դեսպանին՝ հայ-իրանական հարաբերություններին բերած իր նպաստի համար:

Հանդիպմանը խոսվեց նաև երկու ժողովուրդների պատմամշակութային առնչակցությունների, ներկայիս բարիդրացիական սերտ հարաբերությունների և տնտեսական համագործակցության մասին:

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ ՀՐԱԺԵՇՏ ՏՎԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Դեկտեմբերի 11-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական իր առաքելությունն ավարտած Բուլղարիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ստեֆան Դիմիտրովին:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց հայ-բուլղարական հարաբերությունների զարգացման և երկու պետությունների միջև առկա սերտ համագործակցության առիթով՝ անդրադարձավ երկու ժողովուրդների պատմական ընդհանրություններին:

Վեհափառ Հայրապետն ի դեմս դեսպանի իր շնորհակալությունը հայտնեց նաև Բուլղար Ուղղափառ Եկեղեցու պետ Մաքսիմ Պատրիարքին և Եկեղեցու սինոդին 1915 թ. Հայոց ցեղասպանության ճանաչման համար՝ նկատելով, որ ցեղասպանութ-

յան ճանաչմամբ և դատապարտմամբ է միայն հնարավոր կանխել այլ ցեղասպանությունները մարդկության կյանքում:

Հրաժեշտ տալով պրն Դիմիտրովին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր բարեմաղթանքներն ուղղեց դեսպանին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ